ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Հայկ Արթուրի Դեհերյանի «Երևանի ստորգետնյա տարածքների զարգացման և օգտագործման ճարտարապետական առանձնահատկությունները» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, ներկայացված՝ ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ժամանակակից քաղաքաշինության մեջ ստորգետնյա տարածքների օգտագործումը դարձել է կարևոր գործոն՝ հաշվի առնելով խիտ բնակեցված քաղաքների առջևում ծառացած մարտահրավերները: Այս տարածքները, որոնք պատմականորեն օգտագործվել են պահեստավորման, կոմունալ համակարգերի և ապաստարանների համար, այժմ վերածվում են բազմաֆունկցիոնալ միջավայրերի՝ ծառայելով հասարակական, առևտրային և մշակութային նպատակների: Ստորգետնյա տարածքների օգտագործումը ներկայումս դարձել է զարգացող քաղաքային միջավայրում առաջացող գերծանրաբեռնվածության հիմնական լուծումը գոյություն ունեցող խիտ կառուցապատման մեջ:

Այս համատեքստում Հայկ Արթուրի Դեհերյանի ատենախոսությունը՝ նվիրված Երևանի ստորգետնյա տարածքների ճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությանը, ունի և՛ գիտական, և՛ կիրառական նշանակություն: Աշխատանքը կենտրոնանում է քաղաքային միջավայրի կայուն զարգացման հիմնախնդիրների վրա և առաջարկում է լուծումներ ստորգետնյա տարածքների արդյունավետ օգտագործման համար:

Ատենախոսությունը բաղկացած է 124 էջ տեքստային մասից և 33 էջ հավելվածներից: Այն ներառում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն և 103 անուն գրականության ցանկ:

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները և տրվել է աշխատանքի մեթոդակարգը:

Առաջին գլուխը սկսվում է պատմական ակնարկով, որտեղ քննարկվում են ստորգետնյա տարածքների օգտագործման դրդապատճառները և տարբեր ժամանակաշրջաններում զարգացման գործընթացը: Ատենախոսի կողմից

ուսումնասիրվել են ստորգետնյա տարածքների արդյունավետ օգտագործմանը նպաստող գործոնները, որով շեշտվել է թեմայի բազմաոլորտությունը:

Բերվել են ստորգետնյա կառույցների դասակարգումներն ըստ ծավալատարածական բնութագրերի՝ հիմնական ուշադրությունը սևեռելով ֆունկցիոնալ բաղադրիչին: Կատարվել է մի շարք միջազգային օրինակների ուսումնասիրություն՝ հիմնվելով դրանց քաղաքային միջավայրում ստանձնած դերի, ինչպես նաև ֆունկցիոնալ, ծավալատարածական, գեղագիտական բաղադրիչների վերլուծության վրա: Ստորգետնյա տարածքների օգտագործման միջազգային փորձի համալիր ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ ստորգետնյա տարածքները քաղաքային միջավայրի կարևորագույն բաղկացուցիչ տարրերից են, որոնք նպաստում են քաղաքաշինական մի շարք խնդիրների լուծմանը և հեռանկարային զարգացմանը՝ կերտելով նոր անհրաժեշտ մակերեսներ և գործառնական գոտիներ քաղաքի խիտ կառուցապատված հատվածներում: Դուրս են բերվել այն հիմնական հատկանիշները (հասանելիություն, բազմաֆունկցիոնալություն, փոխկապակցվածություն, հոսքերի տարանջատում, տարանցիկություն), որոնք ազդում են ստորգետնյա տարածքների զրագետ օգտագործման և հեռանկարային զարգացման գործընթացներին:

Երկրորդ գլուխը կենտրոնանում է Երևանի ստորգետնյա տարածքների ներկա վիճակի վերլուծության վրա: Մանրամասն ուսումնասիրվել են քաղաքի կենտրոնում գտնվող ստորգետնյա կառույցները: Վերլուծվել են դրանց ծավալատարածական բնութագրերը և ճարտարապետական առանձնահատկությունները, որի արդյունքում բացահայտվել են Երևան քաղաքի կենտրոնում առկա ստորգետնյա տարածքների օգտագործման մի շարք խնդիրներ: Ատենախոսի կարծիքով ստորգետնյա տարածքների օգտագործման հեռանկարային զարգացման համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել ստորգետնյա քաղաքաշինության զարգացմանը միտված առաջարկությունները: Այդ նպատակով վերլուծվել են Երևանի կենտրոնում ժամանակի ընթացքում առաջարկված, բայց դեռևս չիրագործված ստորգետնյա քաղաքաշինության խնդիրներին և հետագա զարգացման նախադրյալներին անդրադարձ կատարող որոշ նախագծեր: Թեմայի շրջանակներում քննարկվել է նաև 2007 թվականին Երևան քաղաքի «Կենտրոն» թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագիծը: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ խնդիրների առաջացումը և լուծումների ոչ հստակ լինելը ընդհանուր համակարգվածության բացակայության արդյունք է: Երկրորդ գլխի վերջում հիմնավորվել

է համակարգային մոտեցման կարևորությունը և գոտիավորման նախագծերի անհրաժեշտությունը ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման և գրագետ իրականացման նպատակով:

Երրորդ գլխում Երևանի կենտրոնի ստորգետնյա քաղաքաշինության կայուն զարգացման նպատակով ձևավորվել են առաջնահերթ պահանջներ, չափորոշիչներ և ընդհանուր դրույթներ: Տարածական պլանավորման և գոտիավորման նախագծերի իրականացման ընթացքում առաջարկվել են որոշակի հստակեցումներ՝ ստորգետնյա տարածքների ներգրավման համատեքստում: Մշակվել է Երևանի կենտրոնի ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման գոտիավորման սխեմա, որի միջոցով բացահայտվել են հեռանկարային զարգացման առանցքային ուղղություններ: Այդ ուղղություններում ստորգետնյա տարածքների արդյունավետ օգտագործումը կարող է նպաստել քաղաքային միջավայրի կարևոր հատվածների միջև անընդհատ հետիոտնային կապերի ստեղծմանը: Բացի այդ, ատենախոսի կողմից մշակվել է աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) գործիքակազմի վրա հիմնված մեթոդ, որը կաջակցի եռաչափ քաղաքաշինական վերլուծությունների զարգացմանը՝ հնարավորություն տալով բացահայտել Երևան քաղաքում նախատեսվող ստորգետնյա տարածքների իրատեսական ծավալատարածական չափորոշիչները:

Ատենախոսի առաջարկություններն ունեն կիրառական նշանակություն, որոնք կնպաստեն Երևան քաղաքի կենտրոնի ստորգետնյա քաղաքաշինության զարգացմանը և խնդիրների լուծմանը, նաև կարող են կիրառվել առանձին ստորգետնյա տարածքների նախագծման և ձևափոխման գործընթացներում: Մշակված առաջարկությունները կնպաստեն հետագա ուսումնասիրությունների և հետազոտական աշխատանքների կատարմանը, անհրաժեշտ ծրագրային զարգացմանը և նոր գործիքակազմերի ներդրմանը:

Աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները

1. Ատենախոսությունում քննարկվող ստորգետնյա տարածքների օգտագործման արտասահմանյան օրինակները հիմնականում հանդես են գալիս առանձին կառույցների տեսքով: Ցանկալի կլիներ ուսումնասիրության մեջ ներառել նաև քաղաքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի ուսումնասիրություններ՝ Երևանի

ստորգետնյա քաղաքաշինության հեռանկարային զարգացման մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար:

2. Հեղինակի կողմից մշակված աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) գործիքակազմի վրա հիմնված մեթոդը կիրառվել է հստակ տարածքում: Կարծում եմ աշխատանքն էլ ավելի կշահեր մեթոդի բազմակի կիրառության դեպքում:

3. Աշխատանքում տեղ են գտել որոշ ձևակերպման անճշտություններ:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Հեղինակի կողմից կատարված է ամբողջական, տեսական և կիրառական նշանակություն ունեցող ավարտուն հետազոտական աշխատանք:

Հաշվի առնելով վերոնշյալը, գտնում եմ, որ Հայկ Արթուրի Դհերյանի ներկայացված «Երևանի ստորգետնյա տարածքների զարգացման և օգտագործման ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Հայկ Արուրի Դհերյանը լիովին արժանի է հայցած ճարտարապետության գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
«Երվանդ Քոչարի» թանգարան ՊՈԱԿ-ի տնօրեն՝
ճարտարապետության թեկնածու՝ Կ. Հ. Քոչար

Կ. Հ. Քոչարի ստորագրության իսկությունը հաստատում եմ.
ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար՝
տ.գ.թ., դոցենտ Լ. Հ. Լևոնյան

14.07.2025թ.